

Cirrus Maestro (Պարտատոմս ձեռք բերող հաճախորդների համար)
Պլաստիկ քարտի տեղեկատվական ամփոփագիր

Մայիսի 12, 2017

Քարտի անվանում	Cirrus Maestro
Քարտի տեսակ	Դեբետ քարտ
Համակարգ	Master
Քարտի գործողության ժամկետ	36 ամիս
Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի
Պատրաստման և տրամադրման ժամկետը	Առավելագույնը 5 աշխատանքային օր Քարտն ակտիվանում է 1 օրվա ընթացքում

Ընդհանուր պայմաններ	
Տրամադրման վճար	0 ՀՀ դրամ
Սպասարկման վճար	1,250 ՀՀ դրամ տարեկան
Հավելյալ/Կից քարտի տրամադրման վճար	1,500 ՀՀ դրամ
Գործարք առևտրային կետերում	0 ՀՀ դրամ
Կանխիկացման կետերում և բանկոմատներում կանխիկի տրամադրման միջնորդավճար	Կոնվերտ Բանկի՝ ՀՀ դրամ 0.2%, արտարժույթ 0.3% ԱրՔա համակարգի այլ բանկերի՝ 1% ԱրՔա համակարգից դուրս՝ 1%, նվազագույնը 1500 ՀՀ դրամ
Կանխիկացման սահմանաչափ	300,000 ՀՀ դրամ, 800 ԱՄՆ դոլար, 600 Եվրո, 25,000 ՌԴ ռուբլի օրական 10 անգամ օրական մեկ գործարքի՝ միայն բանկոմատներից՝ 500,000 ՀՀ դրամ
ԱրՔա համակարգի այլ բանկերի բանկոմատներում կանխիկի մուտքագրում քարտային հաշվին	0.6%
Քարտային հաշվից ամսական քաղվածքի տրամադրում	0 ՀՀ դրամ
Քարտային հաշվից լրացուցիչ քաղվածքի տրամադրում	1,000 ՀՀ դրամ
Կորցրած /գողացված/ վնասված քարտի և ծածկագրի փոխարեն նոր քարտի և ծածկագրի տրամադրում	2,000 ՀՀ դրամ (նույն օրը՝ 3,000 ՀՀ դրամ)
Նոր քարտի դիմում-հայտի կամ գործող	3,000 ՀՀ դրամ

քարտի վերաթողարկման դիմումի դեպքում քարտի և ծածկագրի տրամադրում նույն օրվա ընթացքում	
Արտերկրում քարտի կորստի դեպքում քարտային հաշվից կանխիկ դրամի տրամադրում	գումարի 5%
Հետգանձման անհիմն հայտի ներկայացում	5,000 ՀՀ դրամ
www.arca.am կայքի միջոցով և քարտային հաշիվներով քարտից քարտ փոխանցումներ	0.5%
Քարտին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում(ներառյալ ԱՄՀ)	ՀՀ բջջային օպերատոր՝ 20 ՀՀ դրամ Արտերկրյա բջջային օպերատոր՝ 40 ՀՀ դրամ
Քարտի ապաբլոկավորման վճար	500 ՀՀ դրամ
Արտասահմանյան ուղևորությունների ընթացքում բժշկական ապահովագրության տրամադրում	Ըստ ապահովագրական ընկերությունների սակագների

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. Դիմում – հայտ
2. Անձը հաստատող փաստաթուղթ
3. Հանրային ծառայությունների համարանիշ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք
4. Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

Ուշադրություն

Վճարային սահմանաչափի գերազանցում

Վճարային սահմանաչափի գերազանցման դեպքում հաշվարկվում է գերազանցող գումարի նկատմամբ 0.15% օրական տույժ

Քարտի արժույթից տարբերվող արժույթով գործարքներ

Քարտի արժույթից տարբերվող արժույթով ԱրՔա համակարգից դուրս գործող առևտրի և սպասարկման կետերում կատարված գործարքների դեպքում արտարժույթի փոխանակման ժամանակ գործում է Բանկի կողմից սահմանված 2% միջնորդավճար: Բացառություն են կազմում ԱՄՆ դոլարով և Եվրոյով կատարված գործարքները:

Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնության/գործարքի հավաստագրման պահին գործառնության/գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Հավաստագրման ժամանակ կիրառվում են ARCA/VISA/MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքները, իսկ գործառնության/գործարքի հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքը: Բացառություն են կազմում VISA վճարահաշվարկային համակարգի քարտերով Եվրոյով կատարված գործառնությունները/գործարքները, որոնց հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված Եվրոյի փոխարժեքը: Փոխարժեքների տարբերության հետ կապված արժույթային և այլ ռիսկերի համար Բանկը

պատասխանատվությունն չի կրում:

Փակված քարտային հաշվի մնացորդ

Փակված քարտային հաշվի մնացորդը երեք ամսվա ընթացքում չօգտագործելու դեպքում գանձվում է 1,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար: Եթե մնացորդը փոքր է 1,000 ՀՀ դրամ գումարից, ապա գանձվում է ամբողջ մնացորդային գումարը և հաշիվը փակվում է:

Քարտային հաշիվը տնօրինելու իրավունք

Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

Հեռահար կապի միջոցներ

Բանկի ծառայությունները մատուցվում են նաև հեռահար կապի միջոցներով, որոնց պայմանները ներկայացված են հետևյալ հղումներով՝

Converse Անցանց Բանկ - <https://conversebank.am/hy/internet-banking/>

mConverse Մոբայլ բանկ - <https://conversebank.am/hy/mconverse/>

Իմ Կոնվերս - <https://conversebank.am/hy/my-converse/>

SMS – Converse - <https://conversebank.am/hy/sms-converse/>

Քարտի կորստի/գողացվելու դեպքում

Քարտի կորստի /գողացվելու դեպքում այն արգելափակելու համար հարկավոր է անմիջապես հայտնել այդ մասին՝ հետևյալ եղանակներից ցանկացածով.

1. զանգահարելով Քարտի վրա նշված հեռախոսահամարով,
2. զանգահարելով Բանկ՝ ներքոնշյալ հեռախոսահամարներով.
 - ✓ ժամը 9:00-22:00՝ **(+37410) 511-210, 511-211**
 - ✓ շուրջօրյա՝ **(+37410) 545-514**
 Բանավոր դիմումի ստացումից և Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է:
3. Բանկի ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ զանգահարելով «Արմենիան Քարդ» ՓԲԸ՝ **(+37410) 592-222** հեռախոսահամարով:
4. ուղարկելով համապատասխան գրավոր հաղորդագրություն card@conversebank.am էլ. հասցեով կամ **(+37410) 511-212** ֆաքսով
5. ներկայացնելով գրավոր դիմում Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Արգելափակումից հետո Քարտը հայտնաբերելու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին ամենաուշը 1 բանկային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին:

Գործարքի բողոքարկում

Քաղվածքում գործարքի հաշվեգրման պահից 60 օրացուցային օրվա ընթացքում Քարտապանը կարող է Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը կարող են չդիտարկվել Բանկի կողմից: Գործարքի բողոքարկման համար հարկավոր է պահպանել գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերը:

Հայտը հասանելի է Բանկում, ինչպես նաև՝ հետևյալ հղումով.

<https://conversebank.am/hy/all-forms/>

Քարտի տրամադրման և օգտագործման կանոնները

Քարտի տրամադրման և օգտագործման կանոնները ներառում են Քարտի օգտագործման, պահպանման, անվտանգության ապահովման, քարտով գործարքների բողոքարկման վերաբերյալ կարևոր դրույթներ: Կանոնները հասանելի են հետևյալ հղումով.

<https://conversebank.am/hy/cards/>

Բանկումատներ և կանխիկացման կետեր

Բանկի բանկումատների ցանկ՝ <https://conversebank.am/hy/atms/>

Բանկի մասնաճյուղերի ցանկ՝ <https://conversebank.am/hy/branches/>

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber՝ +374 95 511 211
- Skype՝ conversebank-callcenter

Ճանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Ավանդի արժուրթային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		10 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժուրթային ավանդ		5 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժուրթով ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավելի է	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժուրթային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6

Հեռախոս՝ (+37410) 58-35-14, (+37410) 59-26-64

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21